


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼՎԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՐԱՆ
Երկու րիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տոյար
Վեցամսեայ 1.50 "
ԿԱՆԽԻԿ

Ծանոթանալ տողը
20 ւանդիւր



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ



Rédaction du journal

„Ipravunk“

VARNA (Bulgarie)

Редация
на вѣстникъ
„Иправункъ“
ВАРНА

Գրութիւնք եւ
լեւ տրուիր

ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԻՆՆԻ

(Շար. նախորդ քիւնն)

Հարց. — Թրքահայերու տա-
նական քին պատճառ միայն ցոյց
տալ ուղեցիք թուրք կառավարու-
թեան եւ քիւրտ ու թուրք խու-
ժանին կողմէն։ Իսկ բնաւ
խօսքը չըրինք այն վաշխառու-
նուն կամ յօյնախնայուն, որոնք
քուրտին եւ թուրքին պակաս թո-
ղածը իրենք կամրողացնեն հայ
գեղացի պանդախտները եւ ասոնց
ընտանիքները կեղիքելով։

Պատ. — Զարեքը արմատա-
խիլ ընելու համար նախ անոր
պատճառը պէտք է փնտնել ու
չքննել։ Հայաստանի վաշխառու-
ները եւ յօյնախնայները երկրին անա-
պահութեանը չնորհիւ կը յաջո-
ղին իրենց յաճախորդ գտնել։ Ե-
թէ երկրին մէջ մեր բաղձացածին
պէս բարեկարգ կառավարու-
թիւն մը հաստատուի եւ ըստ ա-
մենայնի ապահովութիւն տրիւ,
այն ատեն հայ ժողովուրդը պոն-
դերաւորութեան դիմելու բնաւ պէտք
չպիտի ունենայ, ամէն մարդ իր
հողովը, իր արհեստովը եւ իր ա-
նասուններովը դիւրութեամբ պիտի
կրնայ ապրուստը հայթայթել։
այս պարագային անխիղճ վաշխա-
ռուն առիթ չպիտի գտնէ իր ան-
խոստովանիլի տոկոսի հաշիւն-
րովը գեղացիին նեղելու։ Կը տես-
նէք թէ վաշխառուական անխղ-
ճութեանց ասպարէզ տուողը կըր-
կին երկրին անապահութեանն է։
մինչդեռ մեր ընկերավարական պա-
րոնները զայն ուրիշ երեւակայական
պատճառներու վերագրելով, չը
ջանան մեր պանդախտ ազգային-
ները համոզել, ըսելով թէ ընկեր-
վարական գրութեան բացակայու-
թիւնն է պատճառ որ վաշխառու-
ները ձեր գոյքերը եւ սեփականու-
թիւնները կը գրաւեն եւ այլն։

Հարց. — Տաճկահայոցս պէտքին
չհամապատասխանող եւ հայկա-
կան դատին յաջողութիւնը վտան-
գող ընկերվարական գաղափար
գէթ առ առ մէկ կողմի դնելով,
բուն հայրենիքի ազատութեան
խնդրով զբաղել ուզող կարեւոր եւ
անկեղծ հին Հնչակ. գործիչներ
կը պակսեն։

Պատ. — Ո՛չ. անկեղծ եւ ձե-
ռահաս անապահութեանը կան-
հին հատուածին մէջ, ինչպէս
խուշակուեան, Գոյաեան եւայլն։
բայց ասոնք ճիշդ իրենց անկեղ-
ծութեանը համար միւսներուն հետ
միասնաբար գործելու անկարելիու-
թիւնը տեսնելով կ'ա' մէկ կողմ
քաշուած են եւ կամ դաւերով դե-
կավարութիւնէ հեռացուցուած են։
Եւ որպէս զի այսպիսիները մաս-
նաճիւղերու մէջ մտնելով, հին
հատուածին մինչեւ ցարդ հետե-
ւած ուղղութեան սխալ եւ աննպա-
տակալարմար ըլլալը ժողովուրդին
ցոյց չտան, Լօնտոնի ղեկավար-
ները անխղճութեամբ ունեցած են
զանոնք զրկարտելու, չըջաբե-
րանելով անուանարկելու եւ մին-
չեւ իսկ անոնց դէմ հալածանք եւ
դաւադրութիւններ լարելու։ Այլեւս
պէտք չէ գաղտնիք պահել թէ Հ-
խուշակուեանի պէս կարող եւ ազ-
նիւ գործիչի մը դէմ դաւադրու-
թիւն կը սարգուի եւ յարձակում
տեղի կ'ունենայ կողմակաւ մէջ դեռ
քանի մը շարաթ առաջ, Ս'իս
մը կըսպաննուի, եւ դեռ դաւա-
դրիւններ կը յայտարարեն թէ «ի-
րենց ընկերվարական սկզբունքին
չհետեւող ո' եւ է Հնչակեան գոր-
ծիչ եթէ կողմակաւ մտնել փորձէ
անպատճառ պիտի սպաննուի»։

Խելքի եւ գաղափարի ուղ-
տութիւնը կապող այս ոճ-
րագործական գրութիւնը ընկեր-
վարական սկզբունքին թէեւ տրա-
մադծօրէն կը հակառի, բայց այդ
պիղծ գրութեան հետեւող վարիչ-
ները արդէն ըսինք թէ ճշմարիտ
ընկերվարականներ ըլլալէ ալ հեռի
են, անոնք աւելի իրենց հացին
եւ հսին մտահոգութեամբը զբա-
ղող մարդիկ են։

Հարց. — Կրնա՞ք ինձ աւելի
որոշ գաղափար մը տալ Լօնտոնի
հին Հնչակ. վարիչներու մասին։

Պատ. — Իրենց ներկան ու
անցեալը մօտէն ճանչցող վստահե-
լի անձնաւորութիւններ Արզու-
մանեանց եւ Սաբունի բուռած մար-
դոց մասին այսպէս կը վկայեն։
«Արզումանեանց Ամբրիկայի գոր-
ծարաններուն մէջ աշխատող տգէտ
գործաւոր մըն էր, երբ Ղազար
Ս'խոյաններէ կազմուած Լօնտոնի

Պատգմ. Ժողովոյ որոշմամբ կեդ-
րոն կանչուեցաւ։ Իրեն փրկարար
միջոց մը եղաւ այս, քանի որ
պարտքերով ծանրաբեռնուած էր
հօն եւ իր պարտատէրներէն փախ-
չիլ յաջողելու համար բացօթեայ
գիշերելով հեռացաւ Ամբրիկայէն։
Արզումանեանց Նազարէկը միայն
կը պաշտէ աշխարհի մէջ, եւ կոյր
ընկերվարական մըն է. ինք ընկեր-
վարութիւնը միայն Նազարէկեանի
ատենօք հրատարակած մէկ քանի
տետրակներուն մէջ կարդացած է,
որովհետեւ բնաւ օտար լեզու չը
պիտիւր։ Սաբունին ալ նոյն աս-
տիճան տգէտ կողակացի գործա-
ւոր մըն է եւ արդէն քանի մը ոճի-
րներու պատասխանատուութեան
տակ կը գտնուի կրսն։ Ասոր
յատկութիւնը լաւ սերտած ըլլա-
լու է Սապահ-Գիւլեան որ Ամ-
բրիկայ յայտարարած է թէ «գրեմ
Սաբունիին որ Զիթեանի դիակը
փռէ Լօնտոնի փողոցներէ միոյն
մէջ»։

Եւ գծադրաբար այսպիսիներ-
րուն ձեռքը մնացած է այսօր հին
Հնչակ. կեդրոնի ղեկավարութիւնը։
Անոնք Նազարէկը կեդրոն բերելէ
եւ ազգ յեղափոխութիւնը ընկեր-
վարութեան վերածելէ զատ բան
չեն մտածեր։

(Շարունակելի)

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն
ԱՆՑՈՒԴԱՐՁՔ

Իտալիոյ եւ Հունգարիոյ նախա-
րարական տագնապները գրեթէ ան-
շուշտ անցան Պէլկրատի հրատապ դէպ-
քերուն հզտեւանքով։ Բէթըր թագա-
ւոր եկաւ սպաննուած Ալէքսանտրի
գահը բազմելու։ սակայն միւս կողմէ
Պելկրատի օտար դեսպաններէն չափեր
իրենց Պետութիւններէն ստացած հրա-
հանգներուն համեմատ Պելկրատէ կը
մեկնին, որպէս զի նոր թագաւորին
մուտքը ողջունելու եւ առժամանակ-
եայ կառավարութիւնը ճանչնալու
յարկին մէջ չգտնուին։

Հետեւեալ եւ մերձաւոր գրեթէ բո-
լոր պետութիւններ, մեծ ու փոքր
նոյնիսկ ուս կառավարութիւնը՝ որ
նոր թագաւորը նորահաւորեց, դաւա-
դիրներու պատժելի կը յանձնարա-
րեն անխտիր։ Իսկ Սքուպչինան՝ թե-
րեւս զինուորական կամ կուսակցական

ազդեցութեան տակ, գրեթէ միա-
ձայնութեամբ տեսակ մը պայման ա-
ռաջարկեց Բէթըր թագաւորին որ դա-
ւադրութեան դէպքով չզբաղի, այ-
սինքն դաւադիրները չպատժէ։ Արդ,
նոր թագաւորը կը գտնուի անազին
զգուարութեան մը առջեւ։ ո՛ր ճամ-
բան ընտրէ։ Եթէ դաւադիրները դա-
տի ենթարկէ առաջին օրէն իր դէմ
թշնամիներու Լէգէոններ պիտի ստեղ-
ծուին։ Եթէ չպատժէ՝ ինք մասամբ
մեղսակցութիւն ստանձնած պիտի ըլ-
լայ, եւ պետութիւնները չպիտի վե-
րահաստատեն իրենց յարաբերութիւն-
ները մինչեւ որ ոճրագործները պա-
տիժ չկրնան։

Այսպէս Բէթըր թագաւոր շատ
փափուկ դրութեան մը մէջ կը գտնուի
եւ ստիպուել է միջին ճամբայ մը ընտ-
րել, գոնէ զխաւոր ոճրագործները
աքսորման դատապարտելով, որ կրնայ
շատ երկար չը տևել, բայց անով ե-
րեւոյթը փրկած եւ պետութեանց գո-
հացում տուած կը լինի։

* Անգլիոյ մէջ օրուան խնդիրն է Ս.
Չէմպրէնի առաջարկած մաքսային
միութեան ծրագիրը, որ այնչափ աղ-
մուկ հանցեւոր։ Այդ ծրագրի մասին նա-
խարարներու միջեւ ալ անհամաձայ-
նութիւն կայ։ Իսկ սպասականները
առիթը գտած կը նկատեն սոսկալի
յարձակում մ'ընել արդի դաշինքին դէմ,
որուն դիրքը խախտու կը նկատուի
այլեւս։ Բայց Չէմպրէն հաստատ կը
մնայ իր գծած ուղիին վրայ։ Երեսփ.
Ժողովէն զատ Լորտերու ժողովին մէջ
ալ հարցապնդումներ տեղի ունեցան
մաքսային ծրագրի մասին եւ Լորտ մը
հակառակ կարծիք յայտնեց եւ ըրաւ
«համարիտ չեմ որ Բրիտանիոյ ելմու-
կան քաղաքականութիւնը այնչափ
ծանր փոփոխութիւն կրէ. մայր հայ-
րենիքին եւ գաղթականութեանց մի-
ջեւ մաքսային միութիւն մը կազմե-
լով հարկ պիտի ըլլայ արմատները
տուրքի ենթարկել։ մենք ոչ մաք-
սային սակացոյցի եւ ոչ ալ գաղթա-
կանութեանց հետ վաճառականական
պայմաններ կնքելու պէտք ունինք։
Անգլ. կայսրութիւնը ժողովուրդին
կերած հացին վրայ տուրք չը գնելով
կրնայ ապրիլ»։

* Գերմանիոյ եւ Անգլիոյ մէջ նոր կնճ-
ւորութիւն մը սկսած է երեւան գալ։
Բանառա՝ որ անգլիական գաղթական-
ութիւն մըն է, մայր երկրի սպ-
րանքներուն եւ գերմանականին մէջ զա-
նազանութիւն գնելով, այս վերջին-
ներուն ծանր մաքս նշանակած է։ Այս
կարգադրութեան դէմ Գերմանիա
սպառնալիք դրկեց Գերմանական կա-
ռավարութեան թէ՛ ինք ալ այդ երկրի
բոլոր սպրանքներուն աւելի ծանր
մաքսեր պիտի դնէ։ Խնդրոյն այս
ծանրակշիռ հանգամանքին տակ բնա-

կան էր որ Գանատա Անգլիոյ պաշտպանութիւնը վայելէր. իրօք այն աւարարպետ Մ. Պալմոյր առջի օր մաքսի խնդրոյն վրայ հարցումի մը պատասխանած միջոցին որոշ կերպով ըսաւ թէ Անգլիա որոշած է իր գաղթականները պաշտպանել որ կը նեղուէին Մայր հայրենիքին դիւրութիւններ տալու պատճառաւ, եւ թէ պատրաստ է առ ի չգոյն ուրիշ զարմանի վրէժխնդրական սակայնոյցներ հաստատելու. նոյնպէս այն օրը Մ. Չէմպրէն որոշապէս ըսաւ թէ Գանատայի խնդրոյն համար Անգլիա Գերմանիոյ դէմ վրէժխնդրական միջոցի կը գիտէ. ճանաչեալ Գերմանացիք ինչ կորուստն եւ խնդիրը մինչեւ ո՞ր կերթայ. Գ.

ԱՐՏԱՌԱՆՔ ԱՄԵՐԻԿԱՅԷ



Ամերիկայի մէջ է՝ Ամերիկայի յուզումը՝ բոլորեալ կատարած է՝ հայ ազատագրութեան է՛ն քաջ, է՛ն անձնուէր ու է՛ն անկեղծ զինուորներէն «Շահէն»ի եղբայրասպանութեան մը զոհ երթալուն համար, մահաւանդ անոր հայրենակիցները եւ գաղափարի ընկերները որոնք ճանչցած էին այդ անմահ հերոսի հոգին, ապրած ու գործած էին անոր հետ. Ստոյգ աղբիւրներէ կը տեղականաբար թէ Փրօվիտէնսի մէջ Մուշեղիները ընդհանուր ժողով մը գումարեր են ուր ներկայ եղեր են ոչ-կուսակցական, Հնչակեան, Դրօշակեան եւ նոյն իսկ Շահէնի արիւնը թափել տուող ոճրագործներուն կուսակցից Մշեցիները եւ միաձայնութեամբ որոշած են իրենց գտնուած քաղաքներու մէջ արգելք հանդիսանալ եղբայրասպաններու կուսակցիցներու ժողովներուն. Մայիս 17ի կիւրաքէին Փրօվիտէնսի Հնչակեան մասնաճիւղի նախաձեռնութեամբ սգահանակէս մը սարգում էր անմահ նալի հերոսի յիշատակին, Աղգային ընդարձակ սրահը նիղ եկած է հոն խոնուած բազմութեան. ամեն սեռէ ու ամեն դասակարգէ հայեր փութացեր են իրենց վերջին սէրն ու յարգանքը

յայտնելու անձնուէր զինուորին. Աղգային զանազան ընկերութիւններ ինչպէս նաեւ անհատներ ծաղկեպսակ զրկած են որոնց մէջ թաղուած է եղեր «անմահային»ին պատկերը. սրահի ճակատը եւ երկու կողմը խոշոր տառերով գրուած է եղեր հետեւեալները. «Արանի» քեզ հայ ժողովուրդ որ Շահէնի նման հերոսներ ծնած ես» «Վայ քեզ հայ ժողովուրդ որ Շահէնի արիւնը թափել տուող ճիւղներ ծնած ես» «Անմահ հերոսի արեան մէջ թող միանան եղբայրանան բոլոր անկեղծ եւ անձուէր հայ յեղափոխական զինուորները» «Շահէնի արեան մէջ՝ պէտք է խեղդուին բոլոր եղբայրասպան ոճրագործները» «Տարոնոյ առիւծը երեք անգամ ազատեցաւ թրքական ճիրաններէն» «Բայց եղբայրասպան ճիւղներու լարած որոգայթը վերջ տուաւ անոր անգին կեանքին»

Սրահը խոնուած հայութեան արդէն զանազան ու յուզում մտքերը աւելի եւս բորբոքած եւ վրէժխնդրութեան արցունքները հոսել սկսած են երբ կարդացուեց Փրօվիտէնսի մասնաճիւղի կողմէ պատրաստուած դամբանական ճառը անմահ Միօսին Նուրի-եալ. Օրուան մասնաւոր ատենախօսները եղած են Դեռոնդ վրդ. Մարգուկեան, «Ջայն Հայրենեացի» խմբագիր պ. Սուրէն Պարթեան, Պ. Ս. Սուրէնեան եւ Տիկին Թաչեան, որոնք բոլորն ալ վեր հանած են Միօսի արժանիքները պատկերացում են անոր բարոյական եւ առաքինի նկարագրի. անձնուէր հոգին եւ քաջութիւնը. եւ ցոյց տուած են այն ոճի իր անաւորութիւնը որով այդ անմահ հերոսը գաղութուած է հայ ժողովրդի անունով հայ ազատագրութեան անունով խօսող ոճրագործ հայերու հրամանով. ժողովուրդը իր հոգի խորքէն վատե՛ր վատե՛ր դաւաճանե՛ր մըմնջած է հոն ու կը մըմնջէ ամեն տեղ. Կիմանաբ թէ Ամերիկայի Հնչակեան մասնաճիւղներու նախադային

վարչութիւնը առանձին տետրակով պիտի հրատարակէ անմահային Շահէնի կենսագրականը եւ հասոյթ պատկերացումն է Միօսի զփառը ընտանիքին. «Ջայն Հայրենեացի»-ը այս շարժումը 1899-ի թուով հրատարակեց ոճրագործ կենսագրութիւնը 4 եւ 5 շրջաբերականները որ զրկած են Պուլկարիոյ Բուսմանիոյ եւ Ռուսաստանի իրենց կոյր հետեւորդներուն եւ որոնցմով պարոն Գարեգին Չիթեանը ներկայացուցելով իբրեւ խաբարայ, խաջագող, դաւաճան եւ այլն. հրահանգած են իրենց հարազատները որ յարաջատ հաղած են ծեծել քֆնել փողոցները խաբարայի ու եթէ ատենք ալ չը քսուեն Չիթեանը կարգի բերելու, գործ դնել աւելի ԾԱՅՐԱՅԵՂ ՄԻՋՈՅՆԵՐ. Թող հայութիւնը՝ եւ մասնաւորապէս Ամերիկայի հայութիւնը աշխարհին բանա՛ն նային չորհրդին, եւ տեսնեն թէ իրենց ճանչցած, իրենց մէջ գործած իրենց սիրած ու յարգած ու իր ամբողջ էութեամբ Հայ ազատագրութեան գործին նուիրուած Չիթեանը որքա՞ն այլափոխուե՛ր, այլափոխուե՛ր՝ է քանի մը ապուշներու գրչի տակ. Նկատողութեան առնելու կէտ չըն ալ այն է որ այդ ոճրագործ շրջաբերականներէն չէ զրկուած իրենց Ամերիկայի հետեւորդներուն որո՞ք զուցէ յանկարծակի պիտի գային՝ թէ ի՞նչ է եղեր իրենց ճանչցած ու ամեն ժամանակ յարգած Չիթեանը. Խեղճ Չիթեան՝ այս է եղեր իր վարձատրութիւնը. հայ յեղափոխական ոյժերու միացման համար իր չարաչար աշխատութեան վարձատրութիւնը, Հայ յեղափոխութիւնը բայ՛ճ բարոյականի մը վրայ հասցունելու եւ զօրացունելու համար իր թափած ճիւղերու վարձատրութիւնը. Հնչակեան երկու հատուածներուն միացումը ապահովելու համար իր թափած քրքուտինքներու վարձատրութիւնը, Ամերիկայի միսիոնարներու կողմէ տարեկան ութ հարիւր տոլար թօշակը ոտնակոխ ընելով տէվրիչային կեանքով

մը Հայ ազատագրութեան գործին նուիրելուն վարձատրութիւնը. Ամերիկայի մէջ շատ ծիծաղելի եւ արհամարհելի յարձած են Նազարբէկ կոչուած հրէշի խնկարկունները. Ասոնց ամբողջ ոյժը կը կայանար նախկին վերակազմեալ հատուածի կեդրոնական գիւտին թուղթերը. Իրենց քով գտնուած ըլլալուն մէջ. աշխարհը աղմուկով լեցուցին «մեր ձեռքն է, մեր ձեռքն է» պօռացին «անոնց վից տարուան պատմութիւնը մեր ձեռքն է» Սուլթանը հազարաւոր սակիներով պիտի վարձատրէր ու եւ մէկը որ կարենայ հայ յեղափոխական կեդրոններու գաղանի թուղթերը հրապարակ բերել, բայց նախկին վերակազմեալ հատուածի եղբայրական «ձեռք մեկնողները այդ ծառայութիւնը կը մատուցանեն առանց վարձատրութեան» Բայց այս փորձին մէջ ալ խայտառակութեամբ Միօսի ցաւալի պարագան այն է որ Հնչակեան միութեան դէմ զատողներու հետեւորդները յայտնաբերու կը քայքայուին. Իրօշականերու կողմէ ու ասիակ մինչեւ հոն հասաւ, որ Հնչակեաններու կողմէ իր ընկերները թուրք կառավարութեան մատնեալ յայտնաբերով արտաքուստ եւ զաւարիքներու կողմէ հովանաւորուած սրիկայի մը սուտերուն եւ զգարտութիւններուն տեղ տուաւ «Հայրենիք»ը. Թերթ մը որ կոչուած է Հայ Յեղափոխութեան պաշտպան կանգնիլ, եւ որ սիրալոյս տակ կուտայ մատնիչներու իր նեղ կուսակցական կիրքերը յագեցունելու համար. Եթէ այսպիսիները երկար շարունակեն իրենց պառակտչի դերը եւ եթէ կորովի ոյժ մը մտնող երեւան չիգայ Հայ Յեղափոխութիւնը իր անկուսէն բարձրացունելու եւ իր կոչման բարձրութեան հասցունելու հիմունքները մը խաչագողներու նմանացուցած Յեղափոխական գործունէութիւնը չարիք մը պիտի դառնայ հայութեան. Ժամանակն որ հայութեան մէջ գրտնուած անկեղծ հոգիները, աղիւ ու ճշմարիտ հայրենասէրները երեւան գան ձեռք ձեռքի տան ու բարեկարգեն հայ Յեղափոխութիւնը. Խ. Կ.

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ (87)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՐՐԴ

ՊԱՐԱՐԴ ԿԻՆԸ

Ֆէրաճէով ծածկուած կինը պահ մը լսեց եւ չորս գին պտտեց իր երկեղակի նայուածքը, յետոյ կամաց ձայնով մը հարցուց. — Բիրլա Նատո՛ք ընէ՛ զատ այս արտոնի մէջ մարդ կա՞յ մի: — Չէ՛... Ի՛նչ կայ որ, նկատել տուաւ Միրօ արիւար: — Ըսելիք մը ունիմ: — Խիտա լաւ, սերեմն մի վախճար... յայտնէ՛: — Կեցի՛ր դուն քուրտ մըն ես ու գիտեմ թէ աշխարհիս մէջ չկայ ազգ մը որ քու երդումիդ պէս նուիրական երդում ունենայ. երդում ըրէ՛ որ Աստուած ես եւ դուն պիտի գիտնանք իմ յայտնած գաղտնիքս: — Կերպուած... չեչտեց Միրօ Արիւար: — Աղբիւր նիքեանի՛ն վրայ: — Աղբիւր նիքեանի՛ն վրայ: — Հիմակ մտիկ ըրէ՛, մեր թաղին մէջ երիտա-

սարդ մը կայ որ սերահարեր է փաշայից կնիկներէն մէկուն վրայ. հասկցա՞ր... — Ի՛նչպէ՞ս... գուցէ՞ Միրօ Արիւար: — Կըսեմ թէ մեր թաղին մէջ երիտասարդ մը կայ որ սերահարեր է քու փաշայից կնիկներէն մէկուն վրայ: — Երիտասարդը սերահարեր է փաշայի կնիկ վրայ... Բայց տեսնե՛ք փաշայի կնիկ ալ սերահարե՞ր է քու ըսած երիտասարդիդ վրայ: — Այո՛... Իրարու վրայ կը խնիթենան: — Տէր Աստուած, ո՞ւր տեսած են զիրար: — Երբ փաշան հեռու քաղաքէ մը հոս կը փոխադրուի, ան ատեն գործը եփուած է եղեր: — Երիտասարդը փաշային հետ է եղեր: — Չէ՛: — Հասկա՞: — Առջեւ կը ճանչնան զիրար: — Հիմակ ի՛նչ գործ կընէ երիտասարդը: — Վաճառական է: — Է՛յ... Ինչպէ՞ս կարելի է՝ աղջիկը փախցունելէն ետքը՝ ատանկ վաճառական մարդու մը տունը պահել: Չէ՛ թէ փաշան անոր մի՛ն կտորը ակամջին թաղ կը թողու: — Ատիկա ճիշդ է: Բայց չե՞նք կրնար միջոց մը գտնել: — Ի՛նչ միջոց: — Փաշայից մարմինը չե՞նք կրնար մէջտեղէն վերցնել: — Ո՞վ պիտի ընէ: — Մենք: — Դուն կին մը իսկ ես ցնդած ծեղկունի մը...

մեր ձեռքէն կրնա՞յ գալ: — Խնդիր մը չէ ատ... Եթէ տարբերով ծեր կնք երկուքս ալ, բայց սրտով ծեր չենք, Բիրլա Նատո՛ք, բաւական է որ կանչենք Աստուած ու գործի սկսենք: Միրօ Արիւար շուրեքեցաւ. Ի՛նչ պատասխան տար անձանոթ թուրք կնիկ մը որ եկած էր ատանկ ծանր ու սոսկալի առաջարկ մը ընելու իրեն. Կրնա՞ր ընդունիլ... Կրնա՞ր համազուել: Գուցէ լրտես մըն էր ան... գուցէ այն չար ոգիներէն մէկէն որ կնիկ մը կերպարանքով կը ներկայանար ու անդունդի մը մէջ կառաջնորդէր զինքը: Հետեւաբար լսեց ու կարծես թէ չը լսեց անոր առաջարկութիւնը: Կինը քիչ մըն ալ մօտեցաւ Միրօ Արիւար եւ շարունակեց. — Ի՛նչ կը մտածես... դուն ասկից վերջը ձեռք թիւրեղով երջանիկ պիտի ապրես... չէ՞ որ «պատառ մը կտաւ ու ար մը հող ըսաւ կան ես ինձի» կըսէիլ պահ մը առաջ: Եթէ յաջողե՛ք գիտցի՛ր որ հոգի մը կազատենք: Փաշայից կնիկ լալով օր կանցունէ եւ շատ չը քաշէ՛ր կը մեռնի: Անոր արեւնը մեր վիզը կիլնայ, Բիրլա Նատո՛ք: — Աղէկ, ինչպէ՛ս պիտի յաջողենք, ընդհատեց Միրօ Արիւար: — Նախ ըսէ՛ կընդունիմ: — Կընդունիմ: — Ուրեմն գիտցի՛ր որ մեր փախուցած աղջիկը թրքուէր մը չէ: — Հասկա՞: — Հայ աղջիկ մըն է: — Հայ աղջիկ մը:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Բուսնաք 12 Յունիս

Պուլկարաճայոց պատրիարքական փոխանորդը, գրեթե 15 օրէ իվեր քաղաքս կը գտնուի. եւ իր եկամտ օրէն իվեր անդադար կաշխատի եւ խորհրդակցութիւններ կը կատարէ թէ թաղ. քննորդոյ եւ թէ տեղւոյս Ազգային կարեւոր անհատներու հետ Առաջնորդութեան հաստատման հարկ եղած նախապատրաստութիւնները տեսնելու եւ արդէն խառն ժողով մը եւս գումարուած է եւ խնդիրը թէեւ վերջնական հանգամանք մը չէ ստացած, բայց լուծուելու մօտ է:

Ինչպէս Ֆիլիպէ, Թաթար. Բազար-ճըք, Սօֆիա իրենց վերջնական որոշումները գրաւորապէս ներկայացուցած են փոխանորդ Հօր եւ սիրայօժար իրենց նիւթական ու բարոյական անկեղծութիւնն յայտնած են, մասնակցելու Առաջնորդարանի ծախուց, նոյնպէս հոս ալ ժողովուրդը ոգեւորուած կը տեսնուի, օր առաջ տեսնելու առաջնորդութեան հաստատութիւնը:

Կը լսենք թէ առ այժմ, Առաջնորդարանի ծախուց համար 10 հազար ֆրանքի մօտ գումար մը պիտի բաւէ. կէսը կը յուսացուի ստանալ Իշխանապետութենէն եւ մնացեալ կէսն ալ պիտի բաժնուի Պուլկարիոյ տասն Հայ գաղութներու մէջ եւ այնպէս կը կարծենք թէ ամէն հայաշատ կեդրոններ ուր կայ հայ եկեղեցի եւ վարժարան մը սիրով պիտի նուիրեն իրենց աշակցութիւնը, ըստ կարի, Առաջնորդութեան հաստատման համար:

Փոխանորդ Հայրը, չաթթու մէջ այցելեց երկուսն վարժարանները քննիչ ուսանողները զանազան ուսմանց մէջ եւ տիրող կարգապահութենէն եւ աշակերտներու ըրած յառաջդիմութենէն զոհ մեկնեցաւ:

Քաղաքս եկած օրէն իվեր երկիցս պատարագ մատուցած է. եկեղեցին լեցուած էր լսելու համար պերճախօս քարոզչին խօսքերը՝ որք շատ ժողովրդական էր եւ մեծ տպաւորութիւն կը ներգործեն ժողովրդեան վրայ:

Այս կերակի ալ 1600 ամեակի առթիւ յետ աւարտման եկեղեցւոյ, վարժարանին մէջ կոկիկ հանդէս մը տեղի ունեցաւ որ լցուած էր ժողովրդեան խառն բազմութիւն մը: Հոն խօսուեցան զանազան բանախօսութիւններ, երգուեցան երգեր, արտասանուեցան ոտանաւորներ, եւ ուր ուրեմն Փոխանորդ հայրը ի բեմ ելնելով հակիրճ ալ ազդու բանախօսութեամբ մը, ի վեր հանեց հայկական եկեղեցւոյ հնութիւնը, յորդոր կարգաց ժողովուրդեան սիրով փարելու իրենց ազգին եւ եկեղեցիին, սէր եւ միութիւն քարոզեց, խանդավառեց ներկայները որոնք փռուեց ծափահարութեամբ ընդունեցին Հայր Սուրբին խօսքերը:

Ինչպէս կը տեսնուի մեր Փոխանորդը գիտէ ոգեւորել ժողովուրդը եւ արդէն իր կարճ ներկայութիւնը մեծ ոգեւորութիւն յառաջ բերած է տեղւոյս Հայ գաղութականութեան մէջ եւ միւս կողմանէ լրջօրէն ձեռք առած է Առաջնորդութեան խնդիրը եւ գիտուի իր պաշտօնին, կը յուսացուի որ մօտ ատենէն, Պուլկարիոյ գաղութը բաղդ պիտի ունենայ տեսնելու իր Առաջնորդը Սօֆիայի մէջ:

ՀԱՎԱՏՈՒՄ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Պուլկար գոմ թէլէրին պիտի բլանը իւզրէ Սէլանիքտէ եէնի պիր հատիսէ զուհուր իտէճէկինէ տալի շայես չըզմը զաղըրնտան Պապը Ալի Սէլանիք վալիսինտէն մալիւմաթ իսթէտի, վալի ճէվա պէն «վազաա օ հօլտա պիր շայես վար իսէտէ, էսասըզ կէօրիւնիօր. ֆազաթ հէր պիր վու գուաթըն էօնիւնիւ ալմազ իշլան լազըմ օլան թէտպիրլէր էլէ ալմը տըր» տէտի:

— Հիւմի բաշա պիր թէլէկուաթլէ Պապը Ալիէ պիրտիրտի քի յու նիս 21է գաուար մահպուս իտի լէն պուլկարլարըն մըզտուրը Սէլանիք վիլայէթիւնտէ 380, Սթիւպ տէ 280 վէ Սօնտաթըրտա 460 ըիշի օլմուշ տըր:

— Թիւրք կաղէթալարըն պէյանը իւզրէ, Սլմապօլտա Եէտի. Գուլէտէ սայէի շահանէտէ ճէսիմ պիր մահպուսէնէ ինչա օլընտապ պուլէա 100 000 օսմ. լիւսը մէ սարիթ թտիսիս օլընմըշ տըր:

Իշլէ պուլնտան կիւզէլ իւլալահաթ օլմուր մը:

— Էրզրուտա ուֆազ չօճուգլարա շէտիտ նէզլէ իսապէթ ի տուպ, չօզլարըն մէվթինէ սէպէպ օլտըղը մահէլիւտէն պիլտիւրիմիշ տիր:

— Եուլան գրալիցասը Օլկա վաթօրը մալսուսլէ Սթանպօլ պօ. զաղընտան տիւն կէշուպ Րուսիա յա կիթմիշ տիր:

ՏԱԽԻԼԻԹԷ

Պաթապա եազըն օլան սինօր մուհաֆըզը պուլընան թիւրք տաքէլէրինտէն 100 քիշի պուլկար թօքրաղընա կիրտիլէր, ֆաթաթ պուլկար մուհաֆըզլար 24 քիշի օլտըզլարը հալտէ թիւրքլէրի կէրի թէրտիւրտիլէր, Պու միւսատէ մէտէ պուլկարլարտան պիրթի եալէլէնտի. թիւրքտէն 26 քիշի էօլիւ վէ եարէլի տիւշտի:

— Պապը Ալիին իսթարաթը իւզրէրինէ, պուլկար հիւքիւմէթի շէթէլէրին թիւրքիայա կէշմէսինի մէնն իթմէր իշլան սինօր մուհա. ֆըզլարը իւզրէրինէ 3000 տաքէր արթըրմըշ օլտըղը Սօֆիտան Պուլքէշ կաղէթալարընա եազըլմըշ տըր:

— Ֆիլիպի տէ վէ Պուլկարաղտա Մաքէթիւնիտան գաշան պուլկար մուհաֆըրլէր իշլան կէօյա ճէպրի սուրէթտէ եահաուիլէրտէն էլլիշէր, եիւզէր ֆրանք թօքլանլարըղը «Մուվազէնէ» եազուպ շէօլլէ իւլապէ իտէյօր:

«Տիւնաթիթ գօրգուսը նէլէր եարմազ»:

ՍԵՐՊԻԱ

Գրալ Բէթըր Պուտաբէշտէ կէզտիկի Էսիտտէ պիր մուհարրիլէ շէօլլէ սէօլլէմիշ տիր:

«Տէօգիւլէն գան խաթրըմա տէհշէթ կէթիւրիօր. Օ' հօյտա պիր գըրկըն էն մուգատտէս սէ. պէպլէ տալի թապիպ օլընամազ, հիւքիւմալարը գաթիլ իթմէք սըլպ օրտուօրնա հէր հալտէ էյի պիր շան կէթիւրմէզ. Պու ճիւնա. յէթին լէքէսի օլպիլիւքի պիր կիւն Սիւրպիւնըն իսթիզպալիւտէ պալտըն պիր կիւզէլ շիյվէսի իլէ բազլանսին»:

Շու հալտէ եազըն վազըթտա գաթիլ գապիթլէր միւհազաթ կէօրմէյէճէք. Պուլնարտան իշլու ժընկէպ կիթմիշ օլտապ Գրալ իլէ ալմէթ իտէյօրլար:

— Բէթըրպուլկապ պիր թէտթ. րօտա պիր գաշ սըլպ գապիթլէրէ գաշըն էհալի շէտիա նումայիշլէր իթտի վէ պաղըրտը «գաթիլլէր գաբուտան տըշարըն», վէ օնլարը բալմաթէա իլէ թաշլաւտըլար:

— Գրալ Բէթըր Բէշտա վէ վի. էննա սլթաթիօնլարընտա եարըմշար սաաթ տուրտու իսէտէ սըրպլարտան մաատա, հիւքիւմէթ թարաֆընտան ըհմի հիշ պիր քիմսէ գարշըլմամըշ տըր:

— Գրալըն Պելկրատա կիրմէ. սինտէն էպվէ Ֆրանսա, Հօլանտա Թիւրքիա վէ Մ. Ամերիկա էլլի. լէրի կիթտիլէր. Ալըմանիա վէ իթալիա էլլիլէրի Պէլկրատա գալտըլար իսէտէ թէպրիքէ վէ շիյնէթէ իշլիւքաք իթմէտիլէր:

— Յունիս 11տէ սաաթ 10տա թօք սէսլէրի գրալ Բէթըր Պէլկրատա եէթիշտիկինի իսթար իթտիլէր. Սիւրպիւնըն տիլէր շէ. հիւլէրինտէն բէք չօգ էհալի բաթիլթաթտա թօքլանմըշ տըր, աաքէրիէ, միւլքիլէ վէ պէլէտիէ պէօ. իւք մէմուլարը գրալը գարշըլա. ալար, էհալի հէր թարաֆտան ԵՍՇԱՍՍԸ նիտալարը իլէ մէտէր. լէթիլի պէյան իտէր իտի. Պէլէ. տիլէ ըէյիսի վէ վիւքէլա ըէյիսի Պէլիք նութ գալարէ գրալը լէպրիգ իթտիլէր:

ՄԻԻԹԷՆԷՎԻԹԷ

Մըսրը իսթէլէրինտէն կէշէն վաթօրլարա Րուսիա հիւքիւմէթի 5 կիւն գալանթիւնա թախ. սիս իթմիշ, վէ թիճարէթ ահա. նամէսինին 4ինճի մատտէսի մու. ճիպ գաղը մալլէրին կիրմէսի գաթիլէն մէնն օլընմըշ տըր:

— Մըսրը խտիվի Բարիստէն մուֆաթէգէթլէ. Լօտարայա ադի. մէթ իթմիշ տիր:

— Մ. Լուպլինի Րօմայա կիթմէսինտէ Բարայա զիյարէթ իտէ. ճէկիլէ տալի պէյան օլընան մուլթէլիֆ էֆեարլար էսաստան խալի տիր. զիրա պու կիւնէ գա. տար օլ պապտա հիշ պիր ըհմի թէպիլգաթ վէ գարար եօգ տըր:

Բաբա պիր Բթթէստան տէօպ. լէթիւ հիւքիւմաւըրը իմբերա. թօք վիլէլէրի քէմալը թալիթիլէ գապուլ իթտի իսէտէ, էօթէտէն պէրու տիւնտէն հէր պիր թա. լաֆընտա Կաթիլիլէրին համիսի տաթ օլընան Ֆրանսանըն ըէյիսի. նի գապուլ իթմէքտէ թէլէտտիւտ կէօթէլլէրի, զիրա ֆրանսըզլար շու սըրա րահիպլէրի տիլկիլէ սօգմազ իսթէյօրլար:

ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ՍՓԻՐԱԻ ՄԵՐ ԵՐԳՈՅ ԲԱԺԱՆԱՐԴՆԵՐԸ ՈՐ ՀԱՃԻՆ ԵՐԱՆԴՆԵՐ ԲԱԺՆԵԳԻՆՆԵՐԸ ՆԱԺԱԿԱՏԱՆ ԳՐՈՒԻՇԻՆ, ՈՐ ԻՐԵՆԵՑ ՎԻՍԻ ՆԵՐԿԱՅԱԳՆԷՆ ՄԵՐ ԸՆԿԱՅԱԳԻՐԸ, ԶՈՐԱ ԵՐԱՆԴՆԱԺ ԵՆՔ ԳԱՆՃՈՒՄԻ ՀԱՄԱՐ, ԻՐԱԶԱՆՆԻՐԻՆ 20 ՍԱՆԳԻՄ ԺԱԽՔ ՎՃԱՐԻՆՈՎ, ՈՐՈՎ ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ ԳԻՐՈՒԹԻՒՆ ՄԵՐ ԸՆԺԱՅԱԺ ԵԶԱՆՔ: ՎՍՏԱՆ ԵՆՔ թէ պիտի գնահատեն այս փոքրիկ զոհողութիւնը:

ՊԱՏՐԱՍՏ ԿՈՐԾ ՄԸ

Ֆիլիպէ Սթաթիօնի փողոցին մէջ, սրճավաճառի (թահմիք) խանութիս համար առեւտուրի վարժ ընկերի մը պէտք ունիմ:

Փափաքողը կրնայ դիմել ինձ անձամբ կամ գրաւոր եւ ստանալ մանրամասն անդեկութիւն:

Ամբակում Շահրիկեան

ԹԱՏՐՈՆ «ՐԻԿԱ»

ՆԱՏԷԺՏԱՆ հայ գերասա. նական խումբը պիտի ներկայացնէ՝

ՈՃՐԱԳՈՐԾ ՀՕՐԸ

ՍԻԱԶԱԿ ՈՐԿԻՆ

Թատերախաղ 4 արարուած

ԾԻԾԱՂԱՇԱՐԺ ԶԱԻԵՇՏ ՄԸ

Գիւն. — կէս ֆրանք

Պնակ շիջագայիւր արգիլեալ է:

Կիւրակէ ելկոյ, շտրունակոն թիւն ներկայացմանց:

ԾԱԽՈՒ ԳԻՐԲԵՐ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՋ ՀԱՅ. ԿԱԿԱՆ: Այս երգարանը Բ. Կնյամ տպագրուելով աւելի ճոխացած ու բարեփոխուած է, եւ հակառակ չնայնաժանութեանը կը պարունակէ սոգ-գային հին եւ նոր խիստ շա. հրգեր:

Գիւն 1 Ֆր.

ՆԷՏԱ կամ ՄԱՄԻՍ ՊԱՏՄԵՆԸ, Պուլկարիոյ աղատութիւնէն առաջ Պուլկար գիւղացիին թուրքերէ կըրած տառապանքները ու անոնց նիստ ու կացը կը պատկերացնէ: Շա. հե. տաքըրապան:

Գիւն 50 ՍԱՆԿ:

ՀԱՅՐԵՆԻԻԲԻ ԶՈՂՆԵՐ: Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքին, գրեց Դ. Նահապետեան:

Զեղչալ Գիւն 1 Ֆր.

Այս գիրքերը տառաւոր համար պէտք է գրմել իրաւունքի խմբաւորութեան, բոսթի ճախքը 10ական սանթիմ միատեղ դրկելով. իսկ գիրքերու արժէքին համար, կիթէ սէրիշ գիւրութիւններ պակսին, կշիղուաւի նամակագրօջ 10 0/0 գեղջող:

Գիւն 50 ՍԱՆԿ:

ՀԱՅՐԵՆԻԻԲԻ ԶՈՂՆԵՐ: Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքին, գրեց Դ. Նահապետեան:

Զեղչալ Գիւն 1 Ֆր.

Այս գիրքերը տառաւոր համար պէտք է գրմել իրաւունքի խմբաւորութեան, բոսթի ճախքը 10ական սանթիմ միատեղ դրկելով. իսկ գիրքերու արժէքին համար, կիթէ սէրիշ գիւրութիւններ պակսին, կշիղուաւի նամակագրօջ 10 0/0 գեղջող:

Գիւն 50 ՍԱՆԿ:

ՀԱՅՐԵՆԻԻԲԻ ԶՈՂՆԵՐ: Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքին, գրեց Դ. Նահապետեան:

Զեղչալ Գիւն 1 Ֆր.

Այս գիրքերը տառաւոր համար պէտք է գրմել իրաւունքի խմբաւորութեան, բոսթի ճախքը 10ական սանթիմ միատեղ դրկելով. իսկ գիրքերու արժէքին համար, կիթէ սէրիշ գիւրութիւններ պակսին, կշիղուաւի նամակագրօջ 10 0/0 գեղջող:

Գիւն 50 ՍԱՆԿ:

ՀԱՅՐԵՆԻԻԲԻ ԶՈՂՆԵՐ: Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքին, գրեց Դ. Նահապետեան:

Զեղչալ Գիւն 1 Ֆր.

Այս գիրքերը տառաւոր համար պէտք է գրմել իրաւունքի խմբաւորութեան, բոսթի ճախքը 10ական սանթիմ միատեղ դրկելով. իսկ գիրքերու արժէքին համար, կիթէ սէրիշ գիւրութիւններ պակսին, կշիղուաւի նամակագրօջ 10 0/0 գեղջող:

Գիւն 50 ՍԱՆԿ:

ՀԱՅՐԵՆԻԻԲԻ ԶՈՂՆԵՐ: Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքին, գրեց Դ. Նահապետեան:

Զեղչալ Գիւն 1 Ֆր.

Այս գիրքերը տառաւոր համար պէտք է գրմել իրաւունքի խմբաւորութեան, բոսթի ճախքը 10ական սանթիմ միատեղ դրկելով. իսկ գիրքերու արժէքին համար, կիթէ սէրիշ գիւրութիւններ պակսին, կշիղուաւի նամակագրօջ 10 0/0 գեղջող:

Գիւն 50 ՍԱՆԿ:

ՀԱՅՐԵՆԻԻԲԻ ԶՈՂՆԵՐ: Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքին, գրեց Դ. Նահապետեան:

Զեղչալ Գիւն 1 Ֆր.

Այս գիրքերը տառաւոր համար պէտք է գրմել իրաւունքի խմբաւորութեան, բոսթի ճախքը 10ական սանթիմ միատեղ դրկելով. իսկ գիրքերու արժէքին համար, կիթէ սէրիշ գիւրութիւններ պակսին, կշիղուաւի նամակագրօջ 10 0/0 գեղջող: